



*Համարը* N 2302-Ն  
*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2006.02.08/7(462) Հոդ.162  
*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 08.08.2006

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 22.12.2005  
*Ստորագրման ամսաթիվը* 14.01.2006  
*Վավերացման ամսաթիվը* 19.01.2006  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ԵՎ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Վավերացնում եմ»*  
 Հայաստանի Հանրապետության  
 Նախագահ Ռ. Քոչարյան  
 19 հունվարի 2006 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2005 թվականի N 2302-Ն

**ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ԵՎ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 17-րդ հոդվածի 2-րդ մասերի, ինչպես նաև 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աղյուսակի 6-րդ բաժնի 5-րդ կետի և «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
  - ա) ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,
  - բ) ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,
  - գ) ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատողների մասնագիտական որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2006 թ. հունվարի 14  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2005 թվականի  
դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1. Սույն կարգով սահմանվում են ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա) ստանալու համար առևտրային իրավաբանական անձանց (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պայմանները և պահանջները:
- 2. Հայաստանի Հանրապետությունում ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են «Ինկասացիայի մասին», «Զենքի մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:
- 3. Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):  
*(3-րդ կետը փոփ. 09.10.14 N 1097-Ն)*
- 4. Սույն կարգի համաձայն լիցենզիա ստացած իրավաբանական անձինք իրավունք չունեն իրականացնելու այլ գործունեություն, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:
- 5. *(կետն ուժը կորցրել է 06.02.14 N 102-Ն)*
- 6. Լիցենզիան տրվում է անժամկետ:
- 6.1. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:  
*(6.1-ին կետը լրաց. 06.02.14 N 102-Ն)*

**II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ**

- 7. Լիցենզիա ստանալու համար հայտատուն լիցենզավորող մարմին է ներկայացնում՝
  - ա) հայտ (համաձայն ձևի)՝ նշելով իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, հայտատուի պետական գրանցման համարը,
  - բ) *(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*
  - գ) հայտատուի՝ առնվազն 4 աշխատողի մասնագիտական որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականների պատճենները և նրանց մոտ զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների բացակայության մասին բժշկական եզրակացությունները,
  - դ) քաղվածքներ սույն կետի «գ» ենթակետում նշված անձանց աշխատանքային գրքույկներից,
  - ե) սույն կետի «գ» ենթակետում նշված անձանց զինվորական գրքույկների և անձնագրերի պատճենները,
  - զ) «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները բավարարող գրահապատ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական տվյալներին վերաբերող փաստաթուղթը,
  - է) *(ենթակետն ուժը կորցրել է 06.02.14 N 102-Ն)*
  - ը) *(ենթակետն ուժը կորցրել է 06.02.14 N 102-Ն)*
  - թ) ինկասացիոն կազմակերպություններին, նրանց կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային, տեխնիկական անվտանգության և այլ միջոցների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:  
*(7-րդ կետը լրաց. 28.09.06 N 1373-Ն, 16.11.06 N 1636-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց. 31.01.13 N 68-Ն, փոփ. 06.02.14 N 102-Ն)*
- 8. Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով:

*(8-րդ կետը լրաց. 18.03.11 N 273-Ն)*

9. Լիցենզավորող մարմինը սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերն ուսումնասիրում և մերժման հիմքերի բացակայության դեպքում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի համաձայն 23 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է լիցենզիա:

*(9-րդ կետը փոփ. 06.02.14 N 102-Ն)*

10. *(կետն ուժը կորցրել է 06.02.14 N 102-Ն)*

11. Լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել «Լիցենզավորման մասին» և «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**

Ձև

\_\_\_\_\_

(հայտատուի անվանումը և

\_\_\_\_\_

կազմակերպական-իրավական ձևը)

\_\_\_\_\_

(գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամարը)

\_\_\_\_\_

(պետական գրանցման համարը)

**Հ Ա Յ Տ**

**ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Խնդրում եմ տալ լիցենզիա \_\_\_\_\_ :  
(գործունեության տեսակի անվանումը)

\_\_\_\_\_

Լիցենզավորման պայմաններին ու պահանջներին ծանոթացել եմ և պարտավորվում եմ պահպանել դրանք:

Կից ներկայացնում եմ՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հայտատու \_\_\_\_\_  
(ստորագրությունը) (պաշտոնը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.

*(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 31.01.13 N 68-Ն)*

*(հավելվածը լրաց. 28.09.06 N 1373-Ն, 16.11.06 N 1636-Ն, փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 18.03.11 N 273-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, լրաց. 31.01.13 N 68-Ն, փոփ., լրաց. 06.02.14 N 102-Ն, փոփ. 09.10.14 N 1097-Ն)*

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2005 թվականի  
դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
*(վերնագիրը փոփ. 09.10.14 N 1097-Ն)*

**Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա**

**Ի Ն Կ Ա Ս Ա Ց Ի Ո Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Մ Ա Տ ՈՒ Ց Մ Ա Ն**

**ԻԾՄ N \_\_\_\_\_**

Իրավաբանական անձի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու վայրը \_\_\_\_\_

Գործողության ժամկետը \_\_\_\_\_

Տրված է \_\_\_\_\_ 200 թ. \_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ. Տ.

*(հավելվածը փոփ. 09.10.14 N 1097-Ն)*

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Մ. Թովույան**

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2005 թվականի  
դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

**ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ**

1. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատողների (այսուհետ՝ աշխատողներ) մասնագիտական որակավորման ստուգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից

ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) դռնբաց եղանակով:

2. Աշխատողների մասնագիտական որակավորման ստուգումն իրականացվում է գրավոր քննության միջոցով:

3. Մասնագիտական որակավորման ստուգման համար աշխատողները ներկայացնում են՝

ա) ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատողների մասնագիտական որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգմանը մասնակցելու մասին հայտը (համաձայն N 1 ձևի):

բ) բարձրագույն կրթության դիպլոմի (վկայականի) պատճենը (առկայության դեպքում),

գ) մասնագիտական որակավորման ստուգման համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

4. Գրավոր քննությունն անցկացվում է թեստային եղանակով՝ հանձնաժողովի կողմից:

Գրավոր քննության թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ ինկասացիոն գործունեության բնագավառը կարգավորող իրավական ակտերի հիման վրա կազմված, նախապես հրապարակված թեմաների ցանկի համաձայն:

Թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումները և փոփոխությունները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից և ենթակա չեն հրապարակման:

Թեստը պարունակում է 6 հարց, որոնց պատասխանելու համար տրվում է 30 րոպե ժամանակ:

Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Թեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր:

5. Աշխատողներին թույլատրվում է մասնակցել գրավոր քննությանը՝ անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը ներկայացնելու դեպքում:

Արգելվում է աշխատողներին գրավոր քննության ժամանակ խոսել միմյանց հետ, օգտվել իրավական ակտերից և այլ նյութերից, այդ թվում՝ մասնագիտական գրականությունից, տեղեկատուներից, ինչպես նաև հեռախոսակապից:

6. Սույն կարգի 5-րդ կետի երկրորդ պարբերության պահանջները չկատարելու դեպքում աշխատողը զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից, և նրա մասին տրվում է բացասական եզրակացություն:

7. Հանձնաժողովի անդամները թեստերի հարցերի պատասխանների արդյունքներն ամփոփում են քննության օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում և ներկայացնում հանձնաժողովի նիստին:

8. Աշխատողը համարվում է որակավորված, եթե թեստի 6 հարցից 4-ին տվել է ճիշտ պատասխան:

9. Մասնագիտական որակավորման քննության դրական արդյունքների դեպքում աշխատողին տրվում է ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատողների մասնագիտական որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայական (այսուհետ՝ որակավորման վկայական) (համաձայն N 2 ձևի):

10. Բացասական եզրակացության դեպքում աշխատողը կարող է կրկին դիմել՝ մասնագիտական որակավորման քննություն հանձնելու համար:

11. Գրավոր քննության ավարտի օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում այդ քննության արդյունքների մասին գրավոր հայտնվում է աշխատողին:

12. Գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին կամ դատական կարգով:

Բողոքը քննարկում է հանձնաժողովը՝ ստանալու պահից 10-օրյա ժամկետում: Բողոքը բավարարվելու դեպքում աշխատողին տրվում է որակավորման վկայական:

13. Գրավոր քննության մասին բացասական եզրակացության դեպքում աշխատողի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**

**Հ Ա Յ Տ**  
**ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ**  
**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ**  
**ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության  
 կենտրոնական բանկի նախագահ  
 \_\_\_\_\_-ին

(անունը, ազգանունը)

Խնդրում եմ ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա տալու նպատակով  
 թույլատրել մասնակցել մասնագիտական որակավորման քննությանը:

Կից ներկայացնում եմ՝

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Դիմող \_\_\_\_\_

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն**

**ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի \_\_\_\_\_ 200 թ.  
N \_\_\_\_\_ որոշման (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի \_\_\_\_\_ հանձնաժողովի  
\_\_\_\_\_ 200 թ. N \_\_\_\_\_ արձանագրություն)

Տրվել է \_\_\_\_\_  
(աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը)

Վկայականը տրված է անժամկետ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱԶ \_\_\_\_\_  
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 200 թ.  
(վկայականը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ.

*(ձևը փոփ. 16.03.17 N 259-Ն)*  
*(հավելվածը փոփ. 16.03.17 N 259-Ն)*